

ՊԵՒՏԻՆԳԻՐԵԱՆ ՔԱՐՏԻՉ. ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՌԱՋԱՒՈՐ ԱՍԻԱՅԻ ՄԻՋՈՎ ԱՆՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՄԱՑԵԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Պեւտինգէրեան Քարտէզը չի կորցնում իր գիտական արժէքը: Նրա արդիականութիւնը մեծանում է նրանով, որ այն շարունակում է բացայայտել իրենում թաքնուած գաղտնիքները, նոր տեղեկութիւններ նուիրելով հետազոտողներին:

ԱՐՏԱՇԱՏ-ՍԱՏԱՂ

Մինչեւ վերջին ժամանակներս չէին տրուում իդենտիֆիկացիան եւ տեղայնացումը՝ Արտաշատ-Սատաղ (Satala) ճանապարհի վրայ գտնուող կայանակէտերի, որոնք ընկած էին Adconfluentes (Հասանկալայից յետոյ) - Datamissa, Tharsidarate եւ Autisparate, ինչպէս նաեւ Lucus Basarohն յաջորդող Aegea (RA Egea), Darucinte եւ Salmalasso (RA Salmalassus):

Հետազոտողների վերջին ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Datamissa կայարանը, որը Պեւտինգէրեան Քարտէզի վրայ նշուած է Adconfluentesից 10 հռոմէական մղոն (15 կմ.) դէպի հարաւ հեռաւորութեան վրայ, կարող է նոյնացուել Բերդակ գիւղի հետ:

Մասնաւորապէս նման եզրակացութեան է յանգել Հայաստան-Պատմական Քարտէզի հեղինակ Ռոբերտ Հիւսընը¹:

Բերդակ գիւղը գտնուում է էրզրումից 19 կմ. հիւսիս-արեւելք իսկ Հասանկալայից² 17 կմ. հիւսիս-արեւմուտք: Ինչպէս ներկայացւում է, այն իր պարամետրերով պէտք է որ համապատասխանի Datamissին:

Ինչ վերաբերում է Tharsidarate եւ Autisparate կայարաններին, որոնք Պեւտինգէրեան Քարտէզի վրայ նշուած են մի գծի վրայ (առանց միմեանցից անջատող զիգզագի) ամենայն հաւանականութեամբ նրանք հանդիսանալով ճանապարհի միեւնոյն հատուածի մաս, գտնուում էին Եփրատ գետի հակառակ ափերին (Արեւմտեան Եփրատ, այժմ՝ Կարա-

սուլ)՝ Tharsidarateն ձախ, իսկ Autisparateն աջ ափին: Հիւսընը Divnik (Դիւնիկ) գիւղը ընդունում է որպէս Tharsidarate:

Յօգուտ այս ենթադրութեան են վկայում կամըջի մնացորդները՝ Դւնիկ³ գիւղից ոչ հեռու, գետի ձախ կողմում: Անցեալում կամուրջը կրում էր այդ գիւղի անունը: Ըստ հետազոտողների, կամուրջը կառուցուել է մօտաւորապէս մ.թ. Դ. դարում: Ինչպէս երեւում է նրա աւերակներից, այն եղել է քարէ եռակամար կառոյց եւ հռոմէական ժամանակաշրջանի կնիքն է կրել⁴:

Դւնիկի միջով անցնող ճանապարհի յայտնաբերումը խարխում է մեր նախկին պատկերացումները այդ մասում Արտաշատ-Սատաղ ճանապարհի ուղղութեան վերաբերեալ: Ինչպէս յայտնի է, Յակոբ Մաննդեանը եւ մի շարք այլ հետազոտողներ ենթադրում էին անցում Եփրատ գետի աջ ափը՝ այսինքն Colcidava (RA Chalchidara), որը համապատասխանում է այժմեան Կալդարիչին⁵: Այս դէպքում Autisparateից մինչեւ Colcidava ճանապարհի հատուածը պէտք է, որ անցնէր Եփրատի ձախ ափով:

Եթէ Արտաշատ-Սատաղ ճանապարհի ուղղութիւնը Դւնիկի միջով եւ համանուն կամրջով ճիշտ ընդունենք, ակնյայտ կը դառնայ, որ Tharsidarateից (յատ.՝ եռկամարաւոր) յետոյ այն անցնում էր Եփրատ գետի աջ ափով: Ինչպէս վկայում են պատմական փաստաթղթերը, միջին դարերում Եփրատի աջափնեայ ճանապարհները առեւտրա-տնտեսական կարեւոր նշանակութիւն ունէին. դա հիմնականում պայմանաւորուած էր նրանց՝ Սեւ ծովի նաւահանգիստների, գլխաւորապէս Տրապիզոնի հետ կապերով:

Միջին դարերում այս ճանապարհներից մէկում առաջանում է առեւտրական խոշոր կենտրոն Արծնը, որը ԺԱ. դարի հայ պատմաբան Արիստակէս Լաստիվերտցու խօսքերով կապեր ունէր «ծովի եւ ցամաքի հետ»⁶:

Autisparateից (յատ.՝ դրսում, կամ միւս ափում ամրացած) ճանապարհը արեւմտեան ուղղութեամբ ձգւում էր դէպի Colcidava, որը գտնւում էր 12 հռոմէական մղոն (18 կմ.) հեռաւորութեան վրայ: Ինչպէս մատնանշում է Մաննդեանը, Colcidavaն եւ իր անուանմամբ եւ գտնուելու վայրով համապատասխանում է հայկական հնագոյն րնակավայր Խալդ-Արիչին⁷, որը ծագել է հին Ժողովուրդ խալդերի անունից, որոնք ապրում էին Պոնտոսում եւ Դերքսենէում (Դերջան):

Նիկողայոս Աղոնցի Հետազոտութիւնները հաստատում են Մանանդեանի ենթադրութիւնների իսկութիւնը: Աղոնցը հիմնուելով անտիկ հեղինակների տուած տեղեկութիւնների վրայ նմանութիւն է տեսնում Դերջանում գտնուող Ալիս գետի՝ Alis, Haly-s (Հայերէն աղ բառից) անունան եւ «խալքեր»ի անունան մէջ: Մասնաւորապէս նա նշում է, որ «Ստրաբոնը գտնում է որ Ալիս գետի անունը առաջացել է այն աղահանքերից, որոնք գտնում էին նրա հոսանքի մօտ: Ստուգաբանօրէն Ալիսին մօտ է Ալիզոնը, որը նոյն գետի անունով անուանում ապրող ժողովրդի անունն է, եւ որի մասին յիշատակում է Հոմերոսը: Ստրաբոնը մէջքերելով քանաստեղծի տողերը, ենթադրում է, թէ Ալիզոնները հենց հին խալիքներն են, որոնք նրա ժամանակ կոչւում էին խալիքներ... Հայերին հարեւան խալիքներին Պլինիոսը անուանում է Armeno-chalybes, Chal-di, հաւանօրէն, հայ խալիքների անուանումն է»⁸:

Իր աշխատութեան մէկ ալ տեղում յիշատակելով Հայերի ծագումնաբանութիւնը, Աղոնցը խալիքներին եւ խալքերին ներառում է այն աւելի քան 20 ազգութիւնների թւում, որոնք մասնակցել են Հայ ժողովրդի կազմաւորմանը: Ըստ նրա, Հայերը մեծացնելով իրենց տարածքը ի հաշիւ հարեւան հողերի, ժամանակին խալիքներից եւ մոսինյկներից⁹ բռնի կերպով խլել են Կարենիտը (Կարին, այժմ՝ Էրզրումի շրջան) եւ Դերքսենէն:

Հետազոտողներին չի յաջողուել նոյնացնել Lucus Basarohից 15 հռոմէական մղոն (22,5 կմ.) հեռաւորութեան վրայ գտնուող Aegea կայաւրանը: Ինչպէս ներկայացւում է, այն պէտք է գտնուէր կամ Կարին-Տրապեզուլնտի ճանապարհին կամ էլ այդ ճանապարհի շրջանում: Aegeaի անունը համահունչ է էգեձոր գիւղի անունն, որը գտնւում էր այդ վայրերում: Որպէս հայկական գիւղ էգեձորը գոյութիւն է ունեցել մինչեւ Ի. դարի սկիզբը¹⁰:

Aegeaից ճանապարհը Կարին-Տրապեզուլնտից դէպի Satala (Սատաղ) ճանապարհից անցնում էր Darucinteի եւ Salmalassoի միջով եւ շարունակւում արեւմտեան ուղղութեամբ:

Darucinteն նոյնացման չի ենթարկւում: Մանանդեանի փորձը՝ բացատրել նրա նշանակութիւնը ելնելով Դերջան-Derxene հնագոյն անունումից, համոզիչ չէ:

Ինչ վերաբերում է Salmalassoին, այն պէտք է փնտրել Կարին-Տրապեզուլնտ ճանապարհից շատ աւելի հեռու՝ հարաւ-արեւմուտք: Ինչպէս

կարելի է ենթադրել, Aegeaից եւ Darucinteից ճանապարհը «կամար-կիսաշրջան» էր կազմում:

Ադոնցին այս տեղանքում յայտնի են Սխամալանիք անունով տեղանքը եւ քաղաքը: Վկայակոչելով 2- դարի բիւզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացուն, նա որոշում է, որ Սխամալանիքի գտնուելու վայրը Յանիկի, Հայաստանի եւ Հռոմէական կայսրութեան սահմանագիծն է: Մասնաւորապէս, պատմաբանը գրում է. «Ծաների երկրում կայ Սքիմալանիքով վայրը, որտեղ Յուստինիանոսը քրիստոնէութիւնը մոր ընդունած ճանքի համար կառուցեց առաջին եկեղեցին: Այստեղ երկիրը բաժանուում է երեք մասի: Հենց այստեղ սկսում եւ այստեղ էլ բաժանում են հռոմէների, պարսկահայերի եւ ճանքի սահմանները: Հենց այստեղ էր, որ Յուստինիանոսը կառուցեց Օրոն քերդը՝ առաջինը այդ երկրում, եւ «որը խաղաղութեան սկիզբ ծառայեց, որովհետեւ այստեղից հռոմէներն առաջին անգամ մուտք գործեցին Ծանիք»¹¹:

Ինչպէս կարելի է ենթադրել Օրոնը գտնուում էր Բայբերդից (Բայբուրտ) հարաւ-արեւմուտք:

Եթէ դատենք Պրոկոպիոս Կեսարացու նկարագրութիւնից, Սխամալանիքը պէտք է որ ինչ-որ տեղ Բայբերդ-Սատաղի գծից հարաւ գտնուէր: Այս կապակցութեամբ Ադոնցը նշում է. «Սատալայից եւ Բայբերդից վերեւ տարածում են երկար շղթայի օղակները», որոնք հնում կոչւում էին Պարխարեան կամ Պարիագեան լեռներ¹²: Քանի որ Սատալան եւ Բայբերդը, որոնք գտնուում էին վերոնշեալ շղթայի հարաւային լանջերին, Հայաստանի կազմում էին, հարկ է այդ լեռները բնական սահման համարել Հայաստանի եւ Յանիկայի միջեւ: Ծաների երկիրը գտնուում էր այդ լեռներից դէպի հիւսիս: Յատկանշական է, որ Պարխարեան լեռները, որոնք Պեւտինգէրեան Քարտէզում նշուած են Mons. Paruerdes անուանմամբ, Արտաշատ-Սատաղ ճանապարհից հիւսիս են նշուած:

Ինչպէս ներկայացւում է, Պեւտինգէրեան Քարտէզի Salmalassoն եւ անուամբ եւ գտնուելու վայրով համընկնում է Պրոկոպիոս Կեսարացու Սխամալանիքի հետ:

Salmalassoից հարաւ-արեւմուտք, նրանից 20 հռոմէական մղոն (30 կմ.) հեռաւորութեան վրայ գտնուում էր Satalaն (հայ.՝ Սատաղ, այժմ՝ Սադակ):

ԱՐՏԱՇԱՏ-ԷԿԲԱՏԱՆԱ

Հետազոտողներից ոմանք բաւարար հիմքեր ունենալով բացայայտում են, որ Մանանդեանը սխալուել է Catispi կայարանը նմանեցնելով Օրդսպուլ բնակավայրի հետ¹³։ Ինչպէս պարզուում է, եւ այդ նոյնացումը եւ փորձն ինքըէկրատանա-Արտաշատ ճանապարհը ուղղել կոգովիտ շրջանով, ձեռնարկուել էին անտեսելով այդ ճանապարհի դարեր շարունակ պահպանուած երթուղին Զուղայով (Զուլֆա) իսկ աճուհետեւ Արաքսի ձախ ափով դէպի Արարատեան դաշտավայր։ Այս ճանապարհը երկար ժամանակներ լաւագոյնս է համարուել։

Արաքսով անցնող ճանապարհի եւ Զուղայի հետ մի հին հայկական աւանդութիւն է կապուած։ Այդ ճանապարհով Ալեքսանդր Մակեդոնացին Զուղայի մօտ գետանց (կամուրջ կամ լաստ) է կառուցել։ Դէպքերը, որոնք իրենց արտացոլումն են գտել աւանդութեան մէջ իրականում տեղի են ունեցել։ Դրանք զուգորդուում են այն փաստի հետ, որ Ալեքսանդր Մակեդոնացին զինուորական ջոկատ էր ուղարկել Հայաստան ոմն Մեմոնի ղեկավարութեամբ՝ Սիսպիրտիսում (Սպեր) ոսկու հանքերը գտնելու նպատակով։ Այս մասին պատմող Ստրաբոնը նշում է, որ տեղի բնակիչները սպանում են ջոկատի հրամանատարին եւ քշում յոյներին¹⁴։

Հայ պատմական գրականութեան մեջ Զուղայի մասին տեղեկութիւններ առաջին անգամ յայտնում է Մովսէս Խորենացին։ Պատմելով Տիգրան Բ-ի (95-55) կողմից Աժդահակի առաջին կնոջը՝ Անուշին, իր ազգակիցների եւ գերիների հետ միասին դաստակերտելու (կալուածքներ) «... եւ գերիս աւանսն, զխրամ եւ զԶուղայ եւ զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն»¹⁵, այսինքն՝ Արաքսի աջակողմեան ափին։

Ստրաբոնի բերած փաստերից, ինչպէս նաեւ Խորենացու պատմութեան կոնտեքստից երեւում է, որ Զուղայով տարանցիկ ճանապարհներ էին անցնում։

Որպէս հաստատում Արտաշատ-էկրատանա ճանապարհի Զուղայի միջով անցնելու հնարաւորութեան թեզի, նպատակայարմար է համարել Պլինիոս Աւագի նշած այդ ճանապարհի Արտաշատից մինչեւ Գանձակ-Շահաստան հատուածի հեռաւորութիւնը Պետինգէրեան Քարտէզում նշուած միեւնոյն հատուածի հեռաւորութեան հետ։ Ըստ Պլինիոս Աւագի, Արտաշատից Գանձակ-Շահաստան ճանապարհի հեռաւորութիւնը, որով մ.թ.ա. 38ին Մարկոս Անտոնիոսի զօրքերն անցել են Միդ-

իա, 450 ոտնաչափ է¹⁶, որը մօտաւորապէս համապատասխանում է 368 կմ-ի Ըստ Պեւտինգէրեան Քարտէզի, ճանապարհի այդ հատուածի հեռաւորութիւնը հաւասար է 345 կմ-ի Ինչպէս տեսնում ենք երկու աղբիւրների հաղորդած տուեալների միջեւ տարբերութիւնն անշուշտ է:

Ինչ վերաբերում է մինչեւ Արտաշատ հեռաւորութեանը՝ Կոգովիտի միջով (հաշուելով Մարանդից), ապա այն պէտք է որ ամենաքիչը 150 կմ-ով անցի լինէր քան հեռաւորութիւնը Ջուղայի միջով:

Այդ վայրերում մ.թ.ա. Բ. դ. տարանցիկ ճանապարհների գոյութեան մասին են վկայում Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզում նշուած Morunda (Մարանդ) եւ Naxuana (Նախիջեան) կայանակէտերը: Անդրադառնալով Կլաւդիոս Պտղոմէոսի գործունէութեանը՝ Հայաստանում, Խորենացին նշում է, որ Արարատ լեռից արեւելք ընկած վայրերով անցել են մարդիկ «որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զընակութիւնս մարդկան չափեցին»¹⁷: Կասկած չի կարող լինել, որ Արարատից արեւելք ընկած վայրերից էր Ջուղան, որը գտնւում էր այդ ճանապարհի Մարանդ եւ Նախիջեան հատուածի միջեւ:

Հայկական աղբիւրներից - որոնք յիշատակում են Ջուղան - միայն Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզից, Պեւտինգէրեան Քարտէզից եւ Խորենացու աշխատութիւնից յետոյ, արժէ նշել Ը. դարի պատմագիր Ղեւոնդին: Պատմելով Ջուղայի մասին Ը. դարի իրադարձութիւնների կոնտեքստում, նա յայտնում է, որ «արաբական զօրքերը գրաւեցին մարերի աւանները, Գողթանի շրջանը եւ Նախիջեան դաստակերտը: Այնուհետեւ պատմիչը նշում է, որ գերիներին՝ անցկացրեցին Երասխ գետը Ջուղայի հունով»¹⁸ դէպի Իրան:

Ինչպէս ներկայացւում է, Ջուղայի մասին յիշատակումը է.-Ը.դդ. իրանում եւ Հայաստանում համաշխարհային առեւտրի աշխուժացման ժամանակաշրջանում Զ.-Է. դ. սկզբում իրանա-բիւզանդական մի շարք պատերազմներից յետոյ, վկայում է այդ կայանակէտի՝ Ասիայից Եւրոպա տանող ճանապարհների դերի վերականգնման մասին:

Որոշ հարցեր՝ կապուած էկբատանա-Արտաշատ ճանապարհի ուղղութեան հետ, դեռեւս կասկածներ են յարուցում հետազօտողների մօտ: Այսպէս, Հիւսընը հարց է բարձրացնում Պեւտինգէրեան Քարտէզի վրայ Zeracanaի տեղագրութեան վերաբերեալ Zeracana-Rapsun-Turnerta ուղեմասում, վկայակոչելով Անանուն Ռաւեննացու տեղեկութիւնները:

ինչպէս յայտնի է աշխարհագրական անունների տարընթերցուածութիւնը Ռաւեննացու Տիեզերագրութեան մէջ օգնում է պարզել Պելտինգէրեան Քարտէզի վրայ գտնուող մի շարք քաղաքների եւ կայանատեղերի անուանումները: Այս դէպքում եւս հնարաւորութիւն է ընձեռնում պարզարանել որոշ անպարզութիւններ:

Հիւսընը, ընդունելով Zeracana՝ որպէս Նոշիրական (Շիրական), տեղայնացնում է այդ կայանը Ուրմիա լճի (Կապուտան)¹⁹ հարաւում: Դրանով նա կասկածի տակ է դնում Մանանդեանի որոշած էկրատանա-Արտաշատի ուղղութիւնը Ուրմիա լճի արեւելեան ափով: Հիւսընը գտնում է, որ Միդիա մտնելիս էկրատանա-Արտաշատ երթուղին անցնում է Ուրմիա լճի արեւմտեան ափով²⁰:

Zeracanaի անուան հետ կապուած Ադոնցն ունի հետեւեալ նկատառումները՝ «Փաստոսի խօսքերի իմաստից հետեւում է, որ Նոշիրականը, Մահկերտը, Նիխորականը եւ Դասամը գտնուում էին լճի միւս կողմում, պէտք է ենթադրել որ Նոշիրականը քաղաքական տերմի էր՝ նշելու համար Ադիաբէնի սահմանին մօտ գտնուող Արշակունիքներին ենթակայ գաւառները, իսկ Նիխորականը եղել է Ատրպատականում գտնուող նրանց կալուածքների նոյնպիսի ընդհանուր անունը»²¹:

Ադոնցի այս նկատառումները թոյլ են տալիս լոյս սփռել Հիւսընի բարձրացրած հարցի վրայ: Ամէն ինչ իր տեղը կ'ընկնի, եթէ մենք Zeracana՝ որպէս Նիհորական ընդունենք եւ դրանով իսկ հաստատենք որ էկրատանա-Արտաշատ ճանապարհն անցնում էր Ուրմիա լճի արեւելեան ափով:

Անանիա Շիրակացին յիշատակում է Նիհորական լեռները Կոհ-ի-Նիհորական անունով՝ Պարսկահայքի արեւելեան մասում, որոնք «տարածուում են մինչեւ Տարոսեան լեռներ»²²:

Վկայակոչելով արաբ հեղինակներին, Ադոնցը մատնանշում է նրանց ծանօթ տեղանքը՝ Դեհ Նահիրականը «այժմեան Դիսերականն է Ուրմիա լճի արեւելեան ափին, Թարիզից հարաւ»²³: Ստուգաբանօրէն Դեհարականը աւելի համահունչ է Ռաւեննացու Zeracanaի հետ: Վերոնշեալ փաստերից ելնելով Zeracanaի նոյնութիւնը Նիհորականի հետ բաւականաչափ ճշգրտօրէն է արտայայտուում:

Ժամանակին Պելտինգէրեան Քարտէզի Հրատարակիչ եւ մեկնաբան Կոնրադ Միլլէրը ինչպէս նաեւ մի շարք այլ գիտնականներ²⁴ իրենց կասկածն էին յայտնում, որ Արտաշատ-Տիգրանակերտ ուղին անցնում է

Բազաւանից՝ Հարքի, Ապահունիքի եւ Տարօնի միջով։ Օրինակ Միլլէրը այդ ուղին ենթադրում էր Արճէշով եւ Բերկրիով, այնուհետեւ Վանայ լճի հարաւային ափով դուրս գալով Ոստան եւ Դաթուան։ Այլ գիտնականներ առաջարկում էին այն տանել Վանի արեւելեան ափով²⁶։ Բոլոր դէպքերում էլ հետազոտողների առաջարկները անտեսում էին Հարքով, Ապահունիքով եւ Տարօնով անցնող ճանապարհները։ Նոյն տեսակէտն ունի նաեւ Հիւսընը, որն անտրամաբանական է համարում այս վայրերում ճանապարհների օգտագործումը, որոնք ձգւում են «հատուող տարածքով անցնող վայրի լեռնցիներով բնակեցուած նեղանցքում»²⁸։

ԱՐՏԱՇԱՏ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհը համեմատաբար քիչ է ուսումնասիրուել։ Նրա կայարաններից շատերը տեղ չեն գտել վաղ ժամանակուայ քարտէզներում եւ պատմական փաստաթղթերում։ Այդ առումով քիչ թէ շատ որոշակի, բայցեւայնպէս երկրորդական տեղեկութիւններ են պարունակում անտիկ եւ ասորական աղբիւրները։ Ըստ այդ աղբիւրների, առեւտրական քարաւանները Միջագետքից Հայաստան էին գալիս Եղեսիայով եւ Ամիդով դէպի Տիգրանակերտ²⁷ տանող ճանապարհներով, իսկ Մծբինով եւ Արբելայով՝ դէպի Արճն (ըստ անտիկ հեղինակների Արզան, Արզանենա)²⁸։

Տիգրանակերտից եւ Արճնից ճանապարհները հիւսիս էին տանում նեղանցքով, որը միջին դարերում ստացաւ Բիթլիսեան (Բաղեշեան) նեղանցք անուանումը։ Այն Վանայ լճի արեւմտեան ափերին ընկած ճանապարհներով հարաւային Հայաստանը միացնում էր իր կենտրոնական տարածքներին։ Այդ ճանապարհներից մէկն էր այսպէս կոչուած «Թագաւորական պողոտան»։

Դաթուանում այդ ճանապարհները ճիւղաւորւում եւ Վանայ լճի հարաւային ափով տանում էին Վասպուրական (Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ քարտէզում՝ Dadyana, աւելի հին աղբիւրներում՝ Դուկկամմա քաղաքը)²⁹։ Այստեղից նրանք շարունակւում էին դէպի Ոստան եւ Վան քաղաքները։ Վասպուրականը, ինչպէս նաեւ Նոր Շիրականը (Պարսկահայք) Հիւսիսային Միջագետքից եւ Ադիարէնից Հայաստան մուտք գործող աւանդական ճանապարհներից մէկն էր։

Դաթուանից կարելի էր առանց Վան մտնելու, անցնելով Ոստանով, անմիջապէս մտնել Վասպուրականի կենտրոնական եւ հարաւային

չորջանները: Հայոց ձոր (ներկայումս՝ Խոշար) շրջանով ճանապարհները անցնում էին Մեծ Աղբակ շրջանի կենտրոն՝ Աղամակերտ: Այնտեղից նրանք տանում էին Զարեհաւան:

Մ.թ.ա. Ա. դ. բուն Հայաստանի եւ Վասպուրականի միջեւ եղած կապերի մասին որոշակի պատկերացումներ են տալիս Բարթոլղիմէոս առաքեալի քարոզչութեան ճանապարհները: Սկսելով Սիւնիքից նրա ուղին Այրարատով եւ Ատրպատականով շարունակւում էր դէպի Վասպուրական՝ Մեծ Աղբակի շրջան: Ինչպէս տեղեկացնում է Խորենացին, Բարթոլղիմէոսի սպանութիւնը տեղի է ունեցել Առեւբանոսում:

Այդ բնակավայրը յիշատակւում է նաեւ մէկ այլ հայկական աղբիւրում՝ *Թալմառքում*³⁰, եւ ըստ հայ եւ երոպական գիտնականների հետազոտութիւնների, այն տեղայնացւում է Աղամակերտի շրջակայքում գտնուող սուրբ Բարթոլղիմէոս եկեղեցուց ոչ հեռու³¹:

Բարթոլղիմէոս առաքեալի քարոզչութեան ուղին մատնանշում է Վասպուրականի, Ատրպատականի եւ Այրարատի միջեւ հին ճանապարհների առկայութեանը, որոնք - պէտք է ենթադրել - Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի մի որոշակի հատուածն էին կազմում:

Տիգրանակերտից Արտաշատ ընկած ճանապարհի առաջացման եւ գործելու պայմանների բացայայտման համար նպատակայարմար է Տիգրանակերտի, որպէս Հայաստանի առեւտրա-տնտեսական եւ մշակութային կենտրոնի, ստեղծման եւ զարգացման ժամանակահատուածի ճշտումը: Ինչպէս յայտնի է, մ.թ.ա. 69ին Լուկուլոսի կողմից Տիգրանակերտի բռնագաղթումից եւ ջախջախումից յետոյ Տիգրան Բ-ի կայսրութիւնը փլուզուեց: Տիգրան Բ-ի մահից յետոյ (55 թ.) Տիգրանակերտը դադարեց Հայաստանի մայրաքաղաք լինելուց: Տիգրանակերտի յետագայ քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքի վրայ բացասական ազդեցութիւն ունեցան պատերազմները որոնք մղւում էին հռոմէացիների եւ պարթեւների միջեւ, քաղաքի յարակից շրջաններում:

Կեանքը Տիգրանակերտում քիչ թէ շատ կայուն բնոյթ է ստանում Արշակունիների (Բ.-Դ.-դ.) թագաւորութեան շրջանում: Տակիտոսի վկայութեամբ, մ.թ. Ա. դարում Տիգրանակերտը համեմատաբար խոշոր քաղաք է եղել³²: Հռոմէական, պարսկական, հայկական եւ այլ աղբիւրները տեղեկացնում են Ա.-Բ. դարերում Հռոմի եւ Պարթեւաստանի միջեւ կապերի աշխուժացման մասին:

Բ.-Գ. դարերում Պարթեւաստանի փլուզման հետեւանքով, Առաջաւոր Ասիայում սկսեց թուլանալ համաշխարհային առեւտրը: Յաջորդ

չըջանում այն յայտնւում է լճացման մէջ, որը շարունակւում է համարեա ողջ Գ. դարում (այն համընկել է Հռոմէական կայսրութեան ստրկատիրական շարժման ճգնաժամի հետ):

Փաստերը ցոյց են տալիս, որ Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհը նորից սկսել է գործել Գ. դարի վերջ-Դ. դարի սկզբին՝ Բիւզանդիայի եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ առեւտրի վերականգնման շրջանում: Եայտնի է, որ 283ին պարսիկները Տիգրանակերտը յանձնեցին Հայաստանում գահին նստած Տրդատ Գ-ին³³:

Ծանրակշիռ փաստարկներ կան յօգուտ այն բանի, որ Դ. դարի առաջին կէսին Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի երթեւեկութեան աշխուժացումը պայմանաւորուած էր այն ժամանակուայ համաշխարհային ուղիները դէպի Կոնստանդնուպոլիս կողմնորոշելու միտումով:

Դա են մասնաւորապէս մատնանշում Պետինգէրեան Քարտէզի վրայ տեղ գտած Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի ուղղումը (կրճատումը) Ոստանից մինչեւ Molchia (Ձորադիր) այնուհետեւ դէպի Զարեհաւան՝ շրջանցելով Աղամակերտը հիւսիս արեւմուտքից:

Դրանից յետոյ Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհը երկար չգործեց: Այն դադարեց գոյութիւն ունենալ 387ին Հայաստանի՝ Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան եւ Իրանի միջեւ բաժանումից յետոյ, երբ Տիգրանակերտը գտնուելով Իրանի եւ Բիւզանդական կայսրութեան (բիւզանդական գոտում) սահմանների միջեւ կորցրեց Հայաստանի կենտրոնը, ինչպէս նաեւ Տիգրանակերտ-Արտաշատ եւ Տիգրանակերտ-Մծբին ճանապարհների վերջնակէտը (տեքմինալ) լինելու նշանակութիւնը՝ վերածուելով մի սովորական բերդաքաղաքի:

Հետագոտողները առաջարկում են ուղիների մի քանի տարբերակ³⁴, որոնք անցնում են Կուր (Քուր) գետի աւազանով: Դրանցից ուշադրութեան է արժանի ճանապարհը դէպի Teleda (RA Telada), որն ընդունում են որպէս Թելաւի Ամենայն հաւանականութեամբ, Teleda՝ համապատասխանում է Թելաւիին, որը Վրաստանի տարածքի հնագոյն բնակավայրերից է: Պատմական յուշարձանները վկայում են, որ Թելաւին Ե. Զ. դարերում քաղաքային բնակավայր է եղել³⁵: Պետինգէրեան Քարտէզի վրայ Teledaի անուան կողքին երկու աշտարակների նշումը վկայում է այն մասին, որ այնտեղ է հիմնադրուել Վրաստանում առաջին եկեղեցական հաստատութիւններից մէկը:

Ինչ վերաբերում է Կուր գետի աւազանի ճանապարհներին, ինչպէս նաեւ շրջանցիկ ճանապարհին ամբողջութեամբ, դիտարկւում են Պեւ-

տինգէրեան Քարտէզը կազմողների դեռեւս վաղ մղումները՝ օգտագործել քարտէզի վրայի դատարկ կամ կիսադատարկ տեղերը այլ ճանապարհների սխեմաների գծագրման նպատակով: Ինչպէս կարելի է նկատել, քարտէզում շրջանցիկ ճանապարհի սխեման մեխանիկօրէն դրւում է աշխարհագրական եւ էթնիկական անուան վրայ, որի հետեւանքով սխեմայի վրայ նշուած քաղաքների եւ կայանակէտերի անուանումները չեն համապատասխանում այդ անուանումների հետ: Այնչափ է, որ հետազոտողներից ոմանք, հիմք ընդունելով այդ անուանումները, սխալ ենթադրութիւններ են անում կապուած շրջանցիկ ուղով անցնող ճանապարհների ուղղութեան հետ Արեւելեան Անդրկովկասի ինչպէս նաեւ Հիւսիսային Իրանի մի շարք շրջանների միջով:

Ժամանակին Միլլէրը առաջարկում էր ուղղել շրջանցիկ ուղին Օրդուբադով (Նախիջևանի շրջանում)³⁶, ընդունելով այն որպէս Sanora, այնուհետեւ դէպի Թաւրիզ, Գեանջա (Գանձակ) եւ Cyropolis (Ռաշտի մօտակայքում): Այնտեղից ուղին պէտք է ձգուէր Աստարայով եւ Լենքորանով իսկ այնուհետեւ Արաքս գետի աւազանով կրկին դէպի Օրդուբադ եւ Արտաշատ:

Վ. Բելլը նոյնացնում է Նորաշէնը Sanoraի հետ (Շարուրի շրջան)³⁷:

Ամբողջութեամբ նման տեսակէտի կրողն է նաեւ Մուրաւիովը, որին վկայակոչում է Հիւսընը³⁸: Ընդ որում, վերջինս չի ընդունում Մարկուարտի այն տեսակէտը, որն ընդունուել էր Մանանդեանի կողմից, համաձայն որի շրջանցիկ ուղին դուրս էր գալիս Արտաշատից եւ աւարտւում էր վերջնական կայան Մցխէտում, որտեղից էլ ետ էր շրջւում դէպի Արտաշատ: Ինչպէս արդէն նշուել է, Արտաշատից Վրաստան ճանապարհները անցնում էին Աղստեւ գետի կիրճով եւ հասնելով Մցխէտ վերադառնում էին Հայաստան Դերէդ գետի կիրճով: Այսպիսով շրջանցիկ ուղին սահմանափակւում էր Հայաստանի եւ Վրաստանի սահմաններով:

Մուրաւիեւի մեկնաբանութիւնները՝ Կուր գետի աւազանի մի քանի ճանապարհների (ինչպէս նաեւ ճանապարհների դէպի Ալբանիա) գոյութեան վերաբերեալ, քննադատութեան չեն դիմանում:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԸ

Վերջին ժամանակներս կասկածի տակ է դրւում Տիգրանակերտի՝ Նփոետի (Նփրկերտ) շրջանում գտնուելու տեղը, որն ընկնում է Ամիդի (այժմ՝ Դիարբեքիր) եւ Բաթման (Քաղիթ) գետի միջեւ:

Մասնաւորապէս նման տեսակէտ է արտայայտուած նաեւ Բարկեն Յարութիւնեանը իր *Մեծ Հայքի վարչա-Քաղաքական Բաժանման Համակարգէն Ըստ «Աշխարհացոյցի»*³⁹ մենագրութեան մէջ: Նա տեղայնացնում է Տիգրանակերտը Արձն շրջանում, խարզան գետի մօտ:

Ի Հիմնաւորումն իր տեսակէտի, Յարութիւնեանը մէջբերում է Ապպիանոսի հետեւեալ խօսքերը՝ «Տիգրան Բ.ն պատանդութիւնից ազատուելով եւ երկիր վերադառնալով, իր գլուխը արքայական թագով պսակեց այն վայրում, որտեղ մա յետագայում հիմնեց իր Տիգրանակերտ մայրաքաղաքը»⁴⁰: Ամենայն հաւանականութեամբ Ապպիանոսի հենց այս ուղերձ-ծանուցումն էլ, որն իրական դեռեւս պարզաբանման կարիք ունի, ընկաւ Յարութիւնեանի կոնցեպցիայի հիմքում, ըստ որի Պեւտինգէրեան Քարտէզում Արտաշատ-Տիգրանակերտ ուղին տանում է ոչ թէ դէպի արեւմուտք՝ Բաթման գետից մինչեւ Արեւմտեան Տիգրիս Ամիդին մօտ, այլ դէպի հարաւ-արեւելք՝ Արձնի շրջան:

Յարութիւնեանի տեսակէտը հիմքից զուրկ է այն պատճառով, որ Առաջաւոր Ասիայի այդ շրջանում այն աղաւաղում է ուղիների սխեման, դրանով խախտելով ոչ միայն Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի ուղղութիւնը, այլեւ Տիգրանակերտ-Մելիտենէն, որն ինչպէս Պեւտինգէրեան Քարտէզն է տեղորոշում անցնում է Ամիդի միջով:

Յարութիւնեանի՝ իր տեսակէտը հիմնաւորելու փորձերը յանգեցրին նրան, որ նա ակամայ դիմում է անվիճելի ճշմարտութիւնների աղաւաղմանը: Այսպէս՝ Nararra կայարանը, որն ըստ Պեւտինգէրեան Քարտէզի գտնւում է Ամիդի հետ անմիջական հարեւանութեամբ, նա նմանեցնում է Նփրկերտին⁴¹, որը համաձայն հետազօտողների տարբերակներից մէկի գտնւում էր Տիգրանակերտի տեղում: Յարութիւնեանը Բաթման գետը համարում է սահմանային գիծ Ծոփքի (Մեծ Ծոփք) եւ Արձնի⁴² միջեւ, դրանով այն փոխարինելով Նիմֆիոս գետի հետ: Յարութիւնեանը Thalbasaris (Մելքաշա) կայարանը, որը համաձայն ասորական աղբիւրների բլուր է Արեւելեան Տիգրիսի ձախակողմեան ստորին աւազանում, նմանեցնում է Բասորիկի հետ⁴³: Ըստ Յարութիւնեանի Բասորիկը զիւղ է Արձնի շրջանում⁴⁴:

Յարութիւնեանը յաճախ ոչ-ճիշտ է մեկնարանում Պեւտինգէրեան Քարտէզը: Մասնաւորապէս դա արտայայտուած է Տիգրանակերտին մօտ գտնուող կայարանների որոշման ժամանակ:

Պեւտինգէրեան Քարտէզի Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի հատուածում՝ Դաթուանից (Datansana), Գզելից (Gilzanas) եւ Քղիմարից (Cymiha) այն կողմ նշուած է Zanserio (RA Zancerion) կայարանը, որը գտնուում է Tigranocartenից (Տիգրանակերտ) 30 հռոմ. մղոն (45 կմ.) հեռավորութեան վրայ: Zanserioն ոչ այլ ինչ է քան Դաթուան գետի արեւելեան վտակներից մէկը՝ ինչպէս Սանասնոյ, Սասնոյ գետը (Zanserio, Zance rion հայերէն՝ Սասնոյ ջուր)⁴⁵: Այդ կայարանը վճռական դիրք էր գրաւում, քանի որ այն որպէս անցում էր ծառայում Բաթման գետով⁴⁶: Նրանով էր անցնում Տիգրանակերտ եւ Ամիդ տանող ճանապարհը:

Յատկանշական է, որ Յարութիւնեանը ինքը դժուարանում է որոշել Zanserio կայարանը: Միեւնոյն ժամանակ նա չի ընդունում Մանանդեանի մեկնարանութիւնը՝ այդ կայարանի վերաբերեալ: Այդ կապակցութեամբ նա նշում է. «Յ. Մանանդեանի մնամ մենք եւս դժուարանում ենք որոշել Zanserio կայարանի սկզբնական հայերէն անուանումը: Միաժամանակ գտնում ենք, որ մեծանուն պատմաբանի կողմից Zanserioն Zoniqart սրբազրելը եւ Չիւնկերտի հետ կապելը ոչնչով փաստարկուած չէ եւ ոչ էլ հաւանական»⁴⁷:

Ըստ Պեւտինգէրեան Քարտէզի, Տիգրանակերտից դէպի արեւմուտք ամենամօտ խոշոր կայարանը adTygrem-Ամիդն է: Ըստ Քարտէզի վրայ նշուած կայարանների միջեւ հեռավորութեան (15+14+13=42 հռոմ. մղոն), այն Տիգրանակերտից 63 կմ.ով ետ է մնում:

Նմանօրինակ թուեր են բերում նաեւ հռոմէա-բիւզանդական աղբիւրներում: Ըստ Պրոկոպիոս Կեսարացու՝ «...Մարտիրոսուաց քաղաքը գտնուում է Սաֆանենա կոչուող շրջանում Ամիդից դէպի հիւսիս եւ նրանից 240 ստադիա հեռավորութեան վրայ: Այն ընկած է Նիմֆիոս գետի վրայ, որը բաժանում է հոռմէական հողը պարսկականից»⁴⁸: Համապատասխան՝ ստադիայի ընդունուած չափի (185մ), այս հեռավորութիւնը կազմում է 44,4 կմ.: Իր աշխատութեան մէկ այլ տեղում Պրոկոպիոս Կեսարացին այլ տեղեկութիւններ է հաղորդում. «Նիմֆիոս գետը հոսում է Մարտիրոսուպոլիսի մօտով եւ Ամիդից գտնուում է մօտաւորապէս 300 ստադիոն հեռավորութեան վրայ»⁴⁹, այսինքն 55,5 կմ.ով, որը ամբողջութեամբ համապատասխանում է Պեւտինգէրեան Քարտէզի տեղեկութիւններին:

ինչպէս արդէն նշել ենք, Տիգրանակերտից հարաւ-արեւելք Տիգրանակերտ-Մծբին ճանապարհին նշուած է Thalbasaris կայարանը, որն ընկած է 15 հռոմ. մղոն (22,5 կմ.) հեռավորութեան վրայ: Այն նոյնացւում է Մելքաշայի հետ⁵⁰:

Ասորական աղբիւրները յայտնում են, որ Դ. դարում այդ բարձունքին տիրում էին պարսիկները: Բիւզանդացիները մտադրուած էին նրա վրայ բերդ կառուցել, սակայն Կալադ Թագաւորի (Թագաւորել է 488-496 եւ 498-531) ուղարկած զօրքերը ստիպեցին նրանց նահանջել: Համաձայն տեղեկութեան, պարսիկները կառավարում էին «Արգաննա երկրամասի արեւելեան սահմանը՝ Մելքաշայից մինչեւ Մայփերկատ (Մարտիրոսուաց)»⁵¹:

Պէտք է ենթադրել, որ «Արգաննայի երկրամաս» ասելով Զ. դարի ասորացի հեղինակները նկատի ունէին Աղձնիք գաւառի հարթավայրային մասի անուան անտիկ ձեւը (Arsanene), որը Անգեղտունի եւ Նփոստի հետ միասին 298ի Մծբինի պայմանագրով անցնում է հռոմէական զօրքերի տիրապետութեան տակ: Ըստ Հայաստանի բաժանման պայմանների, 387ին Աղձնիք գաւառը, բացառութեամբ Աղձն չրջանի (ասորական աղբիւրներում Արզուն) անցաւ Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեանը:

Այս բոլորից երեւում է, որ բիւզանդացիների եւ պարսիկների միջեւ սահմանը այդ վայրերում անորոշ էր (որը դիտարկւում է ասորական աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների կոնտեքստում): Նմանօրինակ իրավիճակը թոյլ էր տալիս երկու կողմերին էլ ժամանակ առ ժամանակ հողային պահանջներ ներկայացնել, որոնք ընկած էին Նիմֆիոս գետից (մինչեւ նրա՝ Արեւմտեան Տիգրիս թափուելը) մինչեւ Արձն տարածքում: Ընդ որում սիրիացի հեղինակները յստակ տարբերակում են «Արգաննայի երկրամասը» «Արզան երկրից»⁵²:

Այս կապակցութեամբ անհրաժեշտութիւն է առաջանում պարզութիւն մտցնել Արգաննէ-Աղձնիքի մասին Բուզանդի տուած տեղեկութեան մէջ: Յարուսթինեանի կարծիքով «Նիքիկերտ-Տիգրանակերտ մոյնացումը էապէս հակասում է Բուզանդի տեղեկութիւններին: Պատմիչի հաղորդմամբ, Շապուհ Բ. քազարտի զօրքերը «առին ւաւերեցին գմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց, իշխանութեանը իշխին... եւ իմբեանք ի Շոփս Մեծ արշաւեցին»⁵³:

Մենք ենթադրում ենք, որ Բուզանդի այս տեղեկութեան իմաստն այն է, որ գաւառին Աղձնեաց ասելով նա ի նկատի ունէր անտիկ հեղի-

նակների Արգանենան՝ այսինքն Աղծնիք գաւառի հարթավայրային մասը: Հենց այդ մասով էր անցնում Մծրին-Տիգրանակերտ ճանապարհը, որով էլ որպէս կարճ երթուղի Մծրինից՝ պարսկական թագաւորների այն ժամանակուայ ռազմականներից դէպի Միջագետք էին շարժւում Շապուհ Բ-ի զօրքերը Thalbasarisով եւ Tigranocartennով դէպի Մոփք:

Պեւտինգէրեան Քարտէզի վրայ Տիգրանակերտին մօտ գտնուող Zanserio, adTygrem եւ Thalbasaris կայարանների իդենտիֆիկացիան եւ տեղայնացումը օգնում են որոշել դէպի այն բերող ճանապարհները: Ինչպէս արդէն նշուել է, արեւելքից Տիգրանակերտ բերող ճանապարհ էր ծառայում Zanserioից եկող ճանապարհը, արեւմուտքից՝ Ամիդից եկող ճանապարհը, իսկ հարաւից՝ Thalbasarisից եկող ճանապարհը: Այս կայարանները յստակօրէն մթագնում են Տիգրանակերտի դիրքը Պեւտինգէրեան Քարտէզի ճանապարհների սխեմայում:

Յարուկթիւնեանը խարխում է սխեման, Անանուն կայարանը ընդունելով Ամիդի տեղը, որը գտնւում է Արեւմտեան Տիգրիսի աջ ափին: Յարուկթիւնեանի այն վկայակոչումը, որ Անանուն կայարանի մօտ նշուել են երկու սրածայր աշտարակներ, որոնք իրրեւ թէ՛ ապացուցում են նրա նոյնութիւնը Ամիդին, իրականում փաստում է նրա նոյնութիւնը Անգղի հետ: Ինչպէս յայտնի է, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսաւորիչը եպիսկոպոս է ուղարկել Անգեղատուն: Ժամանակագրօրէն այս փաստը համահունչ է Պեւտինգէրեան Քարտէզի տեղեկութիւններին⁶⁴:

Ինչպէս արդէն նշել ենք, Հայաստանի 387ի բաժանումից յետոյ, Մոփքը (Նփռեստի եւ Անգեղատունի կազմում) մնաց բիւզանդացիներին, իսկ Աղծնիքը՝ պարսիկներին: Գտնուելով բիւզանդական տարածքում, Տիգրանակերտը դադարեց Տիգրանակերտ-Արտաշատ եւ Տիգրանակերտ-Մծրին ճանապարհների վերջնակէտ լինելուց:

Այդ շրջանում քաղաքում մնացած շատ հայեր տեղափոխուեցին այլ վայրեր: Դրա հետեւանքով Տիգրանակերտում ուժեղացաւ սիրիական ազդեցութիւնը:

Հենց այդ ժամանակ Տիգրանակերտը սկսեցին անուանել Մարտիրոսուաց քաղաք: Այդ անուանումը ունի կրօնական իմաստ եւ նշանակում է «տառապեալների քաղաք»: Դա կապուած էր Դ.դ. վերջ-Ե.դ. սկզբում ապրող յայտնի սիրիացի եպիսկոպոս Մարուկթայի գործունէութեան հետ, որը Տիգրանակերտում հաւաքել է քրիստոնեայնահատակ-զոհների մասունքները, որը ապացուցում է Դ.դ. 40ականների պարսիկ արքայ Շապուհ Բ-ի կողմից քրիստոնեաների հալածումը: Այդ

անուանման սիրիական տարբերակն է Մայփերկատ, իսկ արաբականը՝ Մայփարկին:

Յայտնի է, որ Մարութա եպիսկոպոսը խնդրանքով դիմել է Թէոդոսիոս Բ-ին (408-450)՝ ամրացնել Տիգրանակերտ-Մարտիրոսուացը եւ այնտեղ եկեղեցի կառուցել: Անաստասիոս եւ Յուստինիանոս կայսրերի օրօք բիւզանդացիները հիմնովին վերանորոգեցին Մարտիրոսուաց⁵⁵ քաղաքի ամրոցի կառույցները: Ասորական աղբիւրները ընդգծում են, որ «հռոմէացիները» համար այն «ծառայում էր որպէս դարան եւ որպէս ապաստարան»⁵⁶: Պարսիկները եւ նրանց դաշնակից հոները 532ին «մրա [պարիսպների] դէմ խրամատներ եւ փոսեր փորեցին»⁵⁷, սակայն քաղաքը գրաւել չկարողացան:

Ասորական աղբիւրները նոյնպէս վկայութիւններ են բերում Ակրա բերդի մասին, որը պարսիկները կառուցել էին «Մայփերկատի դիմաց, սահմանի վրայ»⁵⁸: Դրանով նրանք կրկնեցին բիւզանդացիների փորձը, մտադրութիւն ունենալով պարսիկ թագաւոր Կաւադի օրօք բերդ կառուցել Thalbasaris-Մելրաշայի բարձունքի վրայ: Բիւզանդացիները դիմադրում էին պարսիկներին: Չնայած, որ պարսիկները օգտուելով յարմար առիթից, այնուամենայնիւ կառուցեցին բերդը, մի քանի տարի յետոյ բիւզանդացիները պաշարելով գրաւեցին եւ հիմնովին աւերեցին այն:⁵⁹

Պատմութեան կոնտեքստից երեւում է, որ տուեալ իրադարձութիւնները տեղի են ունեցել Ձ. դ. 70ականներին:

Նոյն աղբիւրները յայտնում են մէկ այլ Ակրա բերդի մասին, որը ինչպէս տեքստում է նշւում գտնւում էր «պարսկական երկրում»՝ խաթում⁶⁰:

Այս հարցում պարզութիւն է մտցնում պատմաբան Հայկ Մելքոնեանը, որը պարզաբանում է, որ խաթ էր կոչւում Բաթման գետը⁶¹:

Ակրա անունով երկու բերդ յայտնաբերելը թույլ է տալիս տարբերակել բիւզանդացիների եւ պարսիկների սահմանալին գծերը: Պարսկական սահմանը անցնում էր Աֆումով (Ֆում), Ակբայով եւ Քդիմարով՝ Բաթման գետի աւազանում: Բիւզանդական սահմաններն էին Կլէյսուրներ, Ատտախը, Ֆիսը եւ Տիգրանակերտը (Մարտիրոսուաց)՝ Նիմֆիոս գետի աւազանում:

Երկու Ակրաների եւ երկու սահմանամերձ գօտիների գոյութեան մասին անյայտ լինելը մինչ այժմ էլ չատ հայ եւ արտասահմանցի գիտնականների մոլորութեան մէջ է գցում: Հնարաւորութիւն չունենալով բացայայտելու մանրամասները եւ դրանով իսկ քանդել խճճուած հարցերի հանգոյցը, նրանք նոյնացնում էին Բաթման եւ Նիմֆիոս գետերը, իսկ Տիգրանակերտը փոխարինում էին Սիլվանի հետ, որը գտնւում էր Բաթման գետից 9 կմ. դէպի արեւմուտք եւ Տիգրանակերտից 36 կմ. դէպի արեւելք: Ժամանակին որոշ իմաստով այդպէս են վարուել գերմանացի գիտնականներ Կարլ Լէյմանն-Հաուպտը եւ Վալդեման Բելկը:

Ճիշտ ընտրելով տեղանքը, այսինքն Ամիդի՝ Բաթման գետի ճանապարհի՝ երկայնքով ընկած տարածքը, նրանց չյաջողուեց որոշել պեղումներ կատարելու ճիշտ տեղը:

Ի հաստատումն Տիգրանակերտի գտնուելու վայրի մեր տեսակէտի, մենք պէտք է դիմենք նաեւ միջնադարեան եւ հնագոյն աղբիւրների:

Որպէս օրինակ բերենք Պրոկոպիոս Կեսարացու յայտնի տեղեկութիւն՝ «Մարտիրոսուացից դէպի արեւելք, նոյն Հայաստանում, որը կոչւում է Սոֆանեմա, Ֆէյս անուանով մի տեղ կայ, որը գտնւում է Մարտիրոսուացից աւելի քիչ քան մէկ օրուայ ճանապարհի վրայ: Այդ վայրից այն կողմ, մօտ ութ մղոն ձգուող անանց լեռները միանալով կազմում են երկու կիրճ, որոնք գտնւում են միմեանցից ոչ հեռու եւ կոչւում Կլէյսուրներ»⁶²:

Ադոնցը այս կապակցութեամբ գրում է. «Մայաֆարկինից ոչ հեռու, Գիմիի եւ Գազրուի միջեւ, մինչեւ այժմ էլ իրօք գտնւում է Փիսոն անունով մի փոքրիկ գիւղ: Նրա հիւսիսային կողմում մի ամբողջ մղոն տարածութեան վրայ գտնւում են հին բերդի վեհապանծ աւերակները, որոնց 1861 թուականին այցելութեան է գնացել Դիարբեքիի անգլիական հիւպատոս՝ Թէյլորը»⁶³: Վերջինս գրում է բազմաթիւ աւերակների մասին, որոնք ծածկւում են բլրի լանջը մէկ մղոն տարածութեան վրայ, հաստ պատերի կտորների եւ հմտօրէն տաշուած քարերի շերտերի՝ թափուած ճանապարհին եւ դրանք համարում հնագոյն Ֆիս քաղաքի մնացորդները⁶⁴ (Fees բնագրում — Հ.Մ.):

Ըստ ժամանակակից թուրքական աղբիւրների, այդ տեղը կրում է Ֆիսեան հարթավայր անունը⁶⁵:

Հնագոյն աղբիւրներում, մասնաւորապէս Պուտարքոսի աշխատութիւններում, ուշադրութիւն են գրաւում որոշակի մասնիկներ: Նախ եւ առաջ, դա մատնանշումն է այն փաստի, որ Լուկուլիոսը իր ճամբարն է

խփել գետափի շուրջ «լայնարձակ հարթավայրի» վրայ: Նաեւ, այնտեղ գոյութիւն ունեցող բլրակի մասին, որտեղից տիգրանակերտցիները կարող էին տեսնել եւ հռոմէացիներին ցոյց տալ Տիգրան Բ-ի զօրքերի տեղաբաշխման տեղը⁹⁸:

Արդեօք այդ հարթավայրը Ֆիսեան հարթավայրը չէ՞: Եւ արդեօք Պլուտարքոսի բլուրը չի՞ յիշեցնում Թէյլորի նկարագրած բլրին:

Փաստերի միւս խումբը վերաբերում է Պլուտարքոսի այն տեղեկութեանը, որ, երբ Լուկուլոսը յաջողօրէն օրուայ լուսաբացին ճամբարից դուրս հանեց իր զօրքերը, թշնամու զօրքերը գտնուում էին գետի արեւելեան կողմում: Բանն այն է, որ Բաթման գետի աջ վտակները հոսում են արեւելեան ուղղութեամբ, այն ժամանակ, երբ Պլուտարքոսի մօտ գետը հոսում էր դէպի արեւմուտք:

Իսկ որտե՞ղ է հարցի լուծումը: Մեր կարծիքով, դա այն է, որ հայկական եւ հռոմէական զօրքերի միջեւ գործողութիւնները (պատերազմները) ծաւալւում էին Բաթման գետից արեւմուտք գտնուող վայրերում: Այդ իսկ պատճառով «Պլուտարքոսի գետը» փնտնելուց մենք պէտք է հետեւենք Պեւտինգէրեան Քարտէզի տուեալներին, կողմնորոշուենք Բաթման գետի եւ Ամիդի միջեւ ընկած տարածքով, նաեւ այն գետերի, որոնք հոսում են այդ տարածքի միջով հիւսիսից հարաւ, հարաւ-արեւմուտք, Հայկական Տաւրոս լեռնաշղթայից Արեւմտեան Տիգրիսի ստորին աւազանները:

Եթէ դատենք աշխարհագրական քարտէզներով, նման գետերը այնտեղ մի քանիսն են: Նրանցից մէկի՝ Թուխ գետի մասին յայտնում է աշխարհագրագէտ Թադէոս Յակոբեանը: Նա մասնաւորապէս նշում է, որ 898ին Թուխ գետի ափին տեղի է ունեցել ճակատամարտ ճայկական եւ Հիւսիսային Միջագետքի էմիրի զօրքերի միջեւ⁹⁹:

Եթէ Թուխը, կամ որեւէ այլ գետ, այն գետն է, որի մօտ տեղի է ունեցել Պլուտարքոսի նկարագրած ճակատամարտը, ապա այն պէտք է հոսէր Ֆիսեան հարթավայրով եւ կտրելով Բաթման գետից Ամիդ տանող ճանապարհը շարունակուէր մինչեւ Արեւմտեան Տիգրիս գետը լցունելը: Այդ դէպքում հասկանալի կը լինէր Պլուտարքոսի յայտնած այն միջադէպը, որ Լուկուլոսի զօրքերը անցնելով գետը (կօսքը Նիմփիոս գետի մասին է - Հ.Մ.) որտեղ յարմար գետանց կար, եւ որոշ ժամանակով ճողոպրելով Տիգրան Բ-ի զօրքերի տեսադաշտից՝ յանկարծակի յարձակում կատարեցին թիկունքից⁹⁸:

Այսպիսով, Համաձայն Պեղարդի Գրքի, ինչպես նաև Հռոմէական եւ միջնադարեան աղբիւրների տուեալների, Տիգրանակերտը գտնուում էր Արեւմտեան Տիգրիս գետի եւ նրա արեւելեան վտակի՝ Բաթման գետի միջեւ գտնուող տարածքի կենտրոնական մասում, Ամիդից 49,9 կմ. իսկ Բաթման գետից 55,1 կմ. հեռավորութեան վրայ: Քաղաքը գտնուում էր Նիմֆիոս գետից 11,1 կմ. դէպի արեւմուտք:

Տիգրանակերտի եւ Մարտիրոսուաց քաղաքի նոյնացումը հաստատուում է Thalbasaris-Մելրաշա կայարանով: Կայարանը գտնուում էր Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան եւ Իրանի միջեւ, սահմանի վրայ, որը անցնում էր «Մելրաշալից մինչեւ Մայիերկատ (Մարտիրոսուաց)» տարածքով, այսինքն՝ ըստ Պեղարդի Գրքի՝ Thalbasarishց մինչեւ Tigranocarten:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Hewsen, Robert H., *Armenia, A Historical Atlas*, Chicago: University of Chicago Press, 2001, էջ 651:
- 2 Երանյան Թ. Ն., Մելրե-Բախշեան Ստ. Տ., Բարսեղեան Թ. Ն., *Հայաստանի Եւ Յարակից Երկրների Տեղանունների Բառարան*, հ. 1, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երևան, 1986, էջ 663:
- 3 Divnik *անուանումը* օգտագործում է Հիւսնըր, իսկ Դւնիկ ձեւը՝ *Տեղանունների Բառարանը*:
- 4 Երանյան Թ. Ն., *Հայաստանի Եւ Յարակից Երկրների Տեղանունների Բառարան*, հ. 2, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երևան, 1988, էջ 119, 148-149:
- 5 Iakov Manandian, *O Torgovle I Gorodakh Armenii V Sviasi S Mirovoi Torgovlei Drevnikh Vremen* (*Հայաստանի Առեւտրի Եւ Քաղաքների Մասին՝ Կապուած Հին Ժամանակաշրջանի Համաշխարհային Առեւտրի Հետ*), Երևան, 1954, էջ 139-143:
- 6 Պատմութիւն Արիտակիսի Հաստիքերոցուր, աշխ. Կ. Ն. Իւզրաշեան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 74:
- 7 Manandian, էջ 140:
- 8 Նիկողայոս Աղոնց, *Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում. Քաղաքական Կացութիւնը Ըստ Նախարարական Կարգերի*, Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1987, էջ 71-72:
- 9 Նոյն, էջ 438-439:
- 10 *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հ. 4, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երևան, 1978, էջ 6:

- 11 Ադոնց, էջ 74: Ադոնցը հիմնուում է Հոմերոսի, Ստրաբոնի եւ այլ անտիկ հեղինակների վրայ:
- 12 «Պարխարի Լեռներ», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983, էջ 201:
- 13 Hewsens, էջ 65 II-III:
- 14 Strabon, *Geografiia* (Աշխարհագրություն) XI, XIV; Ադոնց, էջ 25-26, 198:
- 15 Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց, քնն. ըն. եւ ներած. Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, նմանահանություն, լրացումներ Ա. Բ. Սարգիսեան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1991, էջ 83:
- 16 Plin. VI, 12, 6.
- 17 Խորենացի, էջ 83:
- 18 Ղեկոնդ, Պատմություն, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1982, էջ 20:
- 19 Hewsens, էջ 65 III:
- 20 Հիստորիկ դոնում է որ Միդիա մտնելիս էկրատանա-Արտաշատ երթուղին անցնում էր Ուրմիա լճի արեւմտեան ափով (Hewsens, էջ 65 III):
- 21 Ադոնց, էջ 259:
- 22 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թրգմ., առաջ. եւ ծանօթ. Ա. Գ. Աբրահամեան եւ Գ. Բ. Պետրոսեան, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1979, էջ 294:
- 23 Ադոնց, էջ 258:
- 24 Խեյզէս՝ T. Sinclair, "The Site of Tigranocerta. II," *Revue des Etudes Armeniennes*, 1996, t. 26, էջ 51-117:
- 25 Օրինակ Sinclair:
- 26 Hewsens, էջ 65 II:
- 27 V. G. Lukonin, *Drevnii I Rannesrednevekovii Iran*, (Հին եւ վաղմիջնադարեան Իրանը), Մոսկուա, 1987, էջ 145:
- 28 Օտար Աղբիւրները Հայաստանի եւ Հայրի Մասին, 8, Ասորական Աղբիւրներ, Ա., Թարգմանություն ընագրից, առաջաբան եւ ծանօթ. Հ. Գ. Մելքոնեանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, էջ 44, 48; Հ. Մելքոնեան, Աղխարէնի Պետությունը եւ Հայաստանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 194, 197:
- 29 Տեղանունների Բառարան, հ. 2, էջ 48:

- 30 Տեղանունների Բառարան, հ. 1, էջ 424:
- 31 Նոյն:
- 32 Manandian, էջ 176:
- 33 K. V. Trever, *Ocherki Po Istorii Kulturi Drevnei Armenii* (Հին Հայաստանի Մշակույթի Պատմության Ուսումնասիրություններ), Մոսկուա, 1953, էջ 283-285:
- 34 Օրինակ՝ Մուրադիներ, ում ղրդատակում է Հիւսէնը՝ էջ 65 III:
- 35 Հանրագրություն, հ. 4, էջ 162:
- 36 Miller, K., *Itineraria Romana. Romische Reiswege an der Hand der Tabula Peutingeriana*, Stuttgart, 1916:
- 37 Manandian, էջ 187:
- 38 Hewsen, էջ 65 III:
- 39 Թարուծիւնեան Բ., Մեծ Հայքի Վարդա-Ջաղաքական Բաժանման Համակարգչի Հետ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա., (Արեւելեան Եւ Հարավային Աշխարհներ), Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչութիւն, 2001:
- 40 Appiani Alexandrini, *Historia Romana*, Bibl. Teubner, Vol. II, Lipsiae, 1987, Mithr., 87:
- 41 Թարուծիւնեան, էջ 190, 196:
- 42 Նոյն, էջ 203:
- 43 Ասորական Աղբիւրներ, էջ 301:
- 44 Նոյն, էջ 196-197:
- 45 Սասնոյ Գուր եղել է Բաթման գետի անուններից մէկը (Տեղանունների Բառարան, հտ. 1, էջ 549):
- 46 Թարուծիւնեան, էջ 190:
- 47 Այս տեղում ԺԲ. դարում կառուցուել է ներկայումս գործող Մալաթիան կամուրջը (Tourist's Guide, Turkey, Ankara, 1963, էջ 77):
- 48 Ասորական Աղբիւրներ, էջ 302:
- 49 Ադոնց, էջ 15:
- 50 Ասորական Աղբիւրներ, էջ 301:
- 51 Նոյն, էջ 301:
- 52 Նոյն, էջ 287, 301, 452, 458:

- 53 Թարութիւնեան, էջ 186-187.
- 54 Աղոնց, էջ 384-385.
- 55 Նոյն, էջ 164.
- 56 Ասորական Աղբիւրներ, էջ 302.
- 57 Նոյն, էջ 302.
- 58 Նոյն, էջ 459, 460.
- 59 Նոյն, էջ 459.
- 60 Նոյն, էջ 198, 409.
- 61 Նոյն, էջ 409, 198.
- 62 Սոսքը Հայկական Տաւրոսի լեռնաճիւղաւորումներում գտնուող անցտեղերի մասին է, որոնք կոչւում են Կլէյսուրներ:
- 63 Աղոնց, էջ 21.
- 64 Նոյն, էջ 21, Ժանթ. 2.
- 65 Tourist's Guide, էջ 77.
- 66 Plut. Lucullus, XXVII.
- 67 Թակոբեան Թ., «Նիփրկերտ», Հայկական Սոցիալական Հանրագիտարան, հ. 8, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1982, էջ 407-408.
- 68 Ի Նշան Լուկուլոսի յաղթանակի Նիմֆիոս գետը ստացել է Նիկեփորոս (յաղթական) անունը:

TABULA PEUTINGERIANA: NEW DATA ON THE
ROUTES PASSING THROUGH ARMENIA AND ASIA MINOR
(Summary)

HMayak Martirosian

The article discusses the location of various stations named on the Artashat-Satagh (Satala) route depicted on Tabula Peutingeriana, the famous the fourth century A.D. Roman roadmap. Hmayak Martirosian agrees with Robert Hewsen's identification of Datamissa with the village of Berdag. Following Hewsen's identification of Zeracana with Nihorakan, Martirosian provides additional data from other sources, like Anania Shirakatsi and a number of medieval Arab authors (quoted by Nicholas Adonts) to support this view. Martirosian argues that the roadmap's Artashat-Tigranakert (Tigranocerta) section, which ceased operating in 387 A.D., has not been studied in full. The author disagrees with Babken Harutiunian, who places Tigranakert near the river Kharzan.